

2011 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐ

Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը
1	2	3
<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p>	<p>1. Համայնքային բյուջեների եկամտային մասի ավելացում և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարվող ծախսերի մոնիթորինգի իրականացում</p>	<p>- սահմանել պարտադիր լիազորությունների իրականացման կարգերը, նորմատիվներն ու չափորոշիչները (քաղաքաշինության բնագավառ) - սահմանել համայնքներին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման կարգերն ու ֆինանսավորման մեխանիզմները (սոցիալական ծառայության բնագավառ) - տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղական հարկերի մասով հարկային վարչարարության բարձրացում (2010 թ. ապրիլի 27-ի «Հարկերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N ՀՕ-51 ՀՀ օրենքի կիրարկում) - իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսերի օբյեկտիվ կարիքների ուսումնասիրության և այլ չափանիշների վրա հիմնված, տեղական բյուջեների եկամտային մասի շարունակական աճն ապահովող միջոցառումներ (համայնքների բյուջեների ծախսերի եռամսյա և եկամուտների ամենամսյա մոնիթորինգ, վարչարարության բարձրացում, «Տեղական տուրքերի և վճարների հայեցակարգ-ի մշակում)</p>
	<p>2. Հայաստանում տեղական ինքնակառավարման օրենսդրական բազայի և տեղական մակարդակում հանրային կառավարման արդյունավետության բարելավում</p>	<p>- տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավում Համատիրությունների ու բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտում իրավասությունների հստակեցման, մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացման նպատակով` ՀՀ բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման և շահագործման ոլորտի բարեփոխումների 5-ամյա ծրագրի ընդունում, դրանից բխող միջոցառումների իրականացում</p>
		<p>- վարչատարածքային բարեփոխումների իրականացմանն ուղղված ուսումնասիրությունների շարունակություն և «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ-ի վերջնական լրամշակման արդյունքում` մոդելային ծրագրերի մշակում</p> <p>- տեղական ինքնակառավարման ոլորտում վերապատրաստման</p>

		<p>ազգային ռազմավարության վերանայում: Տեղական ինքնակառավարման ոլորտում վերապատրաստման կարողությունների զարգացում: Համայնքային ծառայողների կադրերի ռեզերվի կայացմանն ուղղված միջոցառումների իրականացում</p>
	<p>3. Հաստատված տարածքային զարգացման հայեցակարգից բխող և հակակոռուպցիոն միջոցառումների իրականացում</p>	<ul style="list-style-type: none"> - մարզերի սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ համայնքային նշանակության տեղեկատվության հավաքագրում - մարզային զարգացման ծրագրերի մոնիթորինգի ներդրում և իրականացում - տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացվող վարչական հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով վարչական հսկողության իրականացման մեթոդական ուղեցույցի մշակում - «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը ՀՀ ՏԿՆ-ի մասով միջոցառումների ծրագրի կատարման ապահովում - երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների լիարժեքության ապահովում
	<p>4. Հայաստանի Հանրապետությունից սկիզբ առնող անկանոն միգրացիայի երևույթի ուսումնասիրություն և դրա կանխարգելման նպատակով առաջարկությունների ներկայացում</p>	<ul style="list-style-type: none"> - միջազգային տարբեր կառույցների պատվերով միգրացիոն հարցերի առնչությամբ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և այլ կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունների ուսումնասիրություն - ուսումնասիրության արդյունքներով անկանոն միգրացիան ծնող պատճառների և բացերի վերհանում - վեր հանված պատճառների և բացերի վերացման նպատակով առաջարկությունների ներկայացում
<p>ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն</p>	<p>5. Էլեկտրաէներգիա արտադրող հզորությունների ստեղծում և վերազինում</p> <p>6. Տարածաշրջանային ինտեգրացում և էլեկտրաէներգետիկական համակարգի տեխնիկական վերազինում</p>	<ul style="list-style-type: none"> - Որոտանի ՀԷԿ-երի համակարգի վերազինման աշխատանքների իրականացման նպատակով գործընթացի կազմակերպում և վերահսկում - Մեղրի ՀԷԿ-ի շինարարության ընթացք - Իրան-Հայաստան և Վրաստան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օղային գծերի կառուցման համար անհրաժեշտ համաձայնագրերի ու պայմանագրերի կնքում

		- Հրագրան-Շինուհայր 220 կՎ լարման գործող օդային գծի վերակառուցման համար Համաշխարհային բանկի հետ վարկային համաձայնագրի կնքում, գործընթացի կազմակերպում և աշխատանքների ընթացքի վերահսկում
	7. Ատոմային էներգետիկայի զարգացում	- Հայկական ԱԷԿ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման հարցում ներդրողների հետ բանակցությունների վարում
	8. Իրան-Հայաստան նավթամթերքատար խողովակաշարի և նավթամթերքների տերմինալի կառուցում	- Իրան-Հայաստան նավթամթերքատար խողովակաշարի և նավթամթերքների տերմինալի կառուցման գործընթացի կազմակերպում և վերահսկում
ՀՀ բնապահպանության նախարարություն	9. Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ջրածածկման էնթալպ տարածքներում վնասակար ազդեցության կանխարգելման միջոցառումների իրականացում	- Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ջրի տակ մնացող շուրջ 600 հա անտառածածկ տարածքների ծառաթփային բույսերի մաքրում և հեռացում
	10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանում պահպանվող տարածքների ստեղծում	- «Արփի լիճե ազգային պարկի վարչական շենքի, այցելուների կենտրոնի և հյուրատան շինարարական աշխատանքների ավարտում և կահավորում - աջակցության գոտու տնտեսական զարգացման պլանով նախատեսված միջոցառումների իրականացում, այդ թվում` • աջակցության գոտում խմելու ջրերի համակարգի վերականգնում • աջակցության գոտում համայնքային փոքր ծրագրերի իրականացում • տեղական անասնաբուծության և մսի մշակման բարելավում • մեղվաբուծության բարելավում - «Արփի լիճե ազգային պարկի կառավարման պլանով և գործարար ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում
	11. Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի համալրում	- Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակներից գեղարքունի և ամառային իշխանի պոպուլյացիայի համալրում
ՀՀ ֆինանսների նախարարություն	12. Պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ իրականացվող	- ՀՀ պետական բյուջեով ծախսային ծրագրեր իրականացնող բոլոր գերատեսչությունների գծով նոր ծրագրային կառուցվածքի և այդ ծրագրերի նոր դասիչների համակարգի մշակում և կիրառման հետ կապված խորհրդատվության տրամադրում

	<p>բարեփոխումների շարունակում, այդ թվում`</p> <ul style="list-style-type: none"> - բոլոր գերատեսչությունների կողմից ծրագրային բյուջետավորման ձևաչափով 2012 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի ներկայացում ծրագրային նոր կառուցվածքի և նոր դասիչների համակարգին համապատասխան - մեթոդական ցուցումներին համապատասխան փորձարարական 3 գերատեսչությունների կողմից ՀՀ 2012-2014 թվականների ՄԺԾՕ-ի հայտի հետ մեկտեղ յուրաքանչյուրը 1-ական բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) ներկայացում 	<ul style="list-style-type: none"> - բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) կազմման մեթոդական ցուցումների մշակում և համապատասխան գերատեսչություններին կիրառման հետ կապված խորհրդատվության տրամադրում
	<p>13. Պետական պարտքի գրանցման և հաշվառման միասնական էլեկտրոնային համակարգի ներդրում</p>	<ul style="list-style-type: none"> - ՄԱԿ-ի առևտրի և զարգացման կազմակերպության Պարտքի կառավարման DMFAS ծրագրի թեսթավորում - բրիտանական համագործակցության քարտուղարության պարտքի գրանցման և կառավարման CS-DRMS համակարգի թեսթավորում - պետական պարտքի գրանցման և հաշվառման համակարգերի վերաբերյալ խորհրդատվության ստացում և դրանցից մեկի ներդրման վերաբերյալ որոշման կայացում
	<p>14. Եշակցված և փաթեթավորված որոշ ապրանքների շրջանառության ծավալների հաշվառման համակարգի օրենսդրական (հրավական) դաշտի ապահովում</p>	<ul style="list-style-type: none"> - Եշակցված և փաթեթավորված որոշ ապրանքների շրջանառության ծավալների հաշվառման նպատակով միջազգային պրակտիկայում ընդունված հաշվառման համակարգերի կիրառության ընթացակարգերի ինչպես նաև համապատասխան օրենսդրական հիմքի ուսումնասիրություն և այն Հայաստանի Հանրապետությունում ներդնելու հնարավորությունների ու սահմանափակումների գնահատում - Եշակցված և փաթեթավորված որոշ ապրանքների շրջանառության ծավալների հաշվառման համակարգի ներդրման համար անհրաժեշտ օրենսդրական հիմքի ձևավորում, մասնավորապես` <ul style="list-style-type: none"> ա) «Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի և մի շարք այլ օրենքների նախագծերի մշակում բ) «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունում արտադրվող` դրոշմապիտակներով պարտադիր

		<p>դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում</p> <p>զ) «Դրոշմապիտակների նմուշները (այդ թվում՝ ձևը, գույնը, նշանակվածությունը՝ ըստ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքի տարողության) և տեխնիկական պահանջները սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում</p> <p>դ) «Պիտանելիության (պահպանման) ժամկետ ունեցող ապրանքները այդ ժամկետի ավարտից հետո շրջանառությունից դուրս բերելու, դրանց վրա փակցված դրոշմապիտակները հաշվառելու, վերադարձնելու, ինչպես նաև այդ գործընթացի փաստաթղթավորումն իրականացնելու կարգերը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում</p>
	<p>15. Համաշխարհային բանկի իմբի «Գործարարությամբ զբաղվելը (Doing Business) վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի էական բարելավում</p>	<p>- ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրից բխող գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների իրականացմամբ «Գործարարությամբ զբաղվելը վարկանիշային դասակարգման սանդղակում «Հարկերի վճարումե բաղադրիչով Հայաստանի դիրքի բարելավման ապահովում</p>
<p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>	<p>16. Երևան քաղաքի առավել խոցելի մանկապարտեզներում և դպրոցներում սեյսմիկ և հրդեհային ռիսկերի գնահատում</p>	<p>- Երևան քաղաքի առավել խոցելի 20 դպրոցների և 15 մանկապարտեզների սեյսմիկ ռիսկի գնահատում</p> <p>- Երևան քաղաքի 201 դպրոցներում և 161 մանկապարտեզներում հրդեհային ռիսկի գնահատում</p>
	<p>17. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում վտանգների և ռիսկերի բացահայտման և գնահատման միասնական մոնիթորինգային համակարգի ձևավորում</p>	<p>- Հայաստանի Հանրապետությունում գործող մոնիթորինգային կառույցների գործունեության ուսումնասիրում և վերլուծում</p> <p>- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում մոնիթորինգային համակարգի ստեղծման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում</p>
	<p>18. Հայաստանի Հանրապետության համայնքներում, հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման նպատակով կամավորական փրկա-</p>	<p>- միջազգային կամավորական շարժման փորձի ուսումնասիրում</p> <p>- Հայաստանի Հանրապետությունում առկա հասարակական և կամավորական փրկարար ջոկատների հաշվառում և տվյալների բազայի ստեղծում</p> <p>- Հայաստանի Հանրապետության առավել խոցելի համայնքներում</p>

	<p>րարական միավորումների հիմնում</p>	<p>արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման նպատակով կամավորական փրկարարական միավորումների ձևավորում</p>
<p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p>	<p>19. Տեխնիկական անվտանգության բնագավառում մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, տնտեսավարող սուբյեկտների հետ շփումների կրճատում և մեկ պատուհանի սկզբունքի կիրառում</p>	<p>- տեխնիկական անվտանգության փորձաքննության որակական մակարդակի բարձրացում, արտադրական վտանգավոր օբյեկտներ շահագործող անձանց հետ իրականացվող գործառնությունների առավել մատչելի և դյուրին իրականացում, «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ շփումները նվազեցնելու նպատակով՝ մեկ պատուհանի սկզբունքի կիրառում</p> <p>- միջազգային փորձի ուսումնասիրում և ներդրում</p> <p>- մասնագետների ուսուցում և որակավորում</p> <p>- շարժական լաբորատորիայի համալրում</p>
	<p>20. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման ֆինանսավորման հայեցակարգի մշակում</p>	<p>- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի ֆինանսավորման միջազգային փորձի ուսումնասիրում (օրենսդրության թարգմանություն, մասնագետների հրավիրում, սեմինարների անցկացում, փորձի փոխանակում)</p> <p>- միջազգային փորձը և օրենսդրությունը ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու և տեղայնացնելու համար հանրապետության բոլոր ուսումնական հաստատություններում, բացի Երևան քաղաքից, մոնիթորինգի անցկացում, արդյունքների վերլուծում</p> <p>- ուսումնասիրման արդյունքների ամփոփում, հայեցակարգի մշակում</p> <p>և ներկայացում ՀՀ կառավարություն</p>
	<p>21. ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի կազմակերպում և անցկացում</p>	<p>- անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրում, մասնակից ընտանիքներին համազգեստով ապահովում</p> <p>- ֆիզիկական կուլտուրայի քարոզչության իրականացում՝ զանգվածային լրատվական միջոցներով</p> <p>- տարածքային կառավարման մարմինների հետ համատեղ նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքների իրականացում, մարզադահլիճների վերանորոգում, վարձակալում, 1-ին, 2-րդ, 3-րդ և եզրափակիչ փուլերի անցկացում</p> <p>- մրցանակների հանձնում</p> <p>(ՀՀ Նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի «Ֆիզիկական կուլտուրայի և</p>

	<p>22. Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական պետական քաղաքականության զարգացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման նպատակով ՀՀ երիտասարդության շրջանում համապարփակ ուսումնասիրությունների իրականացում</p>	<p>սպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակներ հիմնելու մասին ՆԿ-113-Ն կարգադրության)</p> <ul style="list-style-type: none"> - Հայաստանի երիտասարդության նոր ազգային զեկույցի մշակում - երիտասարդական ուսումնասիրությունների համար անհրաժեշտ վիճակագրական ցուցանիշների նոր համակարգի ներդրում <p>(Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 26-ի N 13 նիստի N 16 արձանագրային որոշման N 1 հավելվածի 4.5 կետ)</p>
ՀՀ սփյուռքի նախարարություն	<p>23. Նպաստել հայապահպանությանը, հայկական համայնքների ինքնակազմակերպման, միջհամայնքային և Հայաստան-սփյուռք կապերի զարգացմանը</p>	<ul style="list-style-type: none"> - սփյուռքի հանրակրթական և մեկօրյա դպրոցների գործունեությանն աջակցություն, օժանդակություն 10 նոր մեկօրյա դպրոցների կազմակերպմանը, արևմտահայերենի պահպանմանը և զարգացմանը նվիրված ձեռնարկների կազմակերպում - 2011 թվականը երիտասարդության տարվա հռչակում - սփյուռքի երիտասարդության` դեպի Հայաստան պարբերական այցելությունների «Արի Տունե ծրագրի շարունակական իրականացում` շուրջ 800 երիտասարդների հյուրընկալություն Հայաստանում, ընդ որում այդ ծրագրում սփյուռքի 400 խառնամուսնական ընտանիքների երեխաների ընդգրկում - հայապահպանության և հայեցի դաստիարակության քարոզչություն` այդ նպատակով 15 հեռուստահաղորդաշարերի կազմակերպում - սփյուռքի համայնքային կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ 12 հեռավար համաժողովների տարածաշրջանային հավաք-հանդիպումների կազմակերպում, դրանց էլեկտրոնային հասանելիության ապահովում ԱՊՀ-ի և Եվրոպայի տարածաշրջաններում
	<p>24. Սփյուռքում հայկական մասնագիտական ներուժի համախմբում և նրա ներգրավում Հայաստանի զարգացման գործընթացում</p>	<ul style="list-style-type: none"> - 4 մասնագիտական համաժողովների, գիտաժողովների կազմակերպում, այդ թվում` <ul style="list-style-type: none"> • «Սփյուռքի հայկական համայնքների ղեկավարների համահայկական համաժողովե • «Սփյուռքի ԶԼՄ-ների երիտասարդ լրագրողների դպրոցե • «Սփյուռքի երիտասարդական կազմակերպությունների ղեկավարների հավաքե, «Երիտասարդական խորհրդարանի» ստեղծում • «Սփյուռքի զարգացման հեռանկարները գլոբալացվող աշխարհում գիտաժողով - սփյուռքի համայնքներում առկա ներուժի վերաբերյալ տվյալների

		<p>բազայի համալրում, համահայկական 2 մասնագիտական ցանցերի ստեղծում, ընկերակցությունների միջև ուղղահայաց և հորիզոնական կապերի հաստատում ու ամրապնդում</p> <ul style="list-style-type: none"> - Հայաստանում հաստատված հայրենադարձների կյանքին ու գործունեությանը նվիրված միջոցառումների, ռադիո և հեռուստահաղորդումների կազմակերպում - քարոզչական ծրագրերի մշակում և տարածում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով - 2 համահայկական մրցանակաբաշխությունների անցկացում սփյուռքյան համայնքների մասնակցությամբ, «Մեր մեծերը ծրագրի իրականացում, 4 հայազգի հայտնի դեմքերի կյանքի և գործունեության ուսումնասիրում և ներկայացում ՀՀ-ում և սփյուռքում
<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>26. 2011 թվականին համավճարի համակարգի ներդրում անհետաձգելի և գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման բնագավառներում</p>	<ul style="list-style-type: none"> - «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 04. 03. 2004 թ. N 318-Ն նոր խմբագրությամբ որոշման ընդունում - անհետաձգելի և գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման բնագավառներում համավճարների չափի սահմանում՝ դիֆերենցված ըստ մարզերի և Երևան քաղաքի, հաստատված ՀՀ առողջապահության նախարարի հրամանով և համաձայնեցված ՀՀ ֆինանսների նախարարի հետ - պետական պատվեր իրականացնող հիվանդանոցային բուժօգնության բնագավառում բուժանձնակազմի վարձատրության կարգի կանոնակարգում և հաստատում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով
	<p>27. Առողջության առաջնային պահպանման օղակում ըստ կատարողականի (խրախուսական) ֆինանսավորման կարգի հաստատում և ներդրում</p>	<ul style="list-style-type: none"> - ըստ կատարողականի (խրախուսական) ֆինանսավորման և վարձատրության կարգի մշակում, հաստատում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով և կարգի ներդրում - բժշկական հաստատությունների կողմից ներկայացված և ըստ կատարողականի (խրախուսական) ֆինանսավորման և վարձատրության հիմք հանդիսացող հաշվետվությունների մոնիթորինգի իրականացման կարգի մշակում, հաստատում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով և կարգի ներդրում
	<p>28. Երեխայի առողջության պետական հավաստագրի համակարգի ներդրման ծրագրի մշակում և իրականացում</p>	<ul style="list-style-type: none"> - 0-7 տարեկան երեխաների անվճար բուժման համալիր ծրագրի մշակում և ներդրում - 0-7 տարեկան երեխաների անվճար բուժման համալիր ծրագրի ներդրմանն ուղղված հանրային իրազեկման աշխատանքների իրականացում

	29. Շտապ բժշկական օգնության և սպասարկման հայեցակարգի ներդրում	<p>շտապ բժշկական օգնության և սպասարկման միասնական համակարգի ներդրում, ներառյալ՝</p> <ul style="list-style-type: none"> - միասնական դիսպետչերական կենտրոնի հիմնադրում - ժամանակակից սարքավորումներով և մեքենաներով ծառայությունների համալրում - շտապ օգնության ծառայության աշխատողների (բժիշկներ, բուժքույրեր, վարորդներ) վերապատրաստում, վերակենդանացման բրիգադներում բժիշկ-ռեանիմատոլոգների ներգրավում - շտապ օգնության ծառայության գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի մշակում - շտապ օգնության ծառայության ֆինանսավորման գործող մեխանիզմների բարելավում և աշխատողների աշխատավարձերի բարձրացում
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	30. Վանաձոր-Ֆիոլետովո նոր երկաթգծի նախագծման աշխատանքների կազմակերպում	Վանաձոր-Ֆիոլետովո նոր երկաթգծի շինարարության ֆինանսավորման, նախագծային-նախահաշվային փաստաթղթերի նախապատրաստման և շինարարական աշխատանքների իրականացմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի մշակում
	31. Հյուսիս-հարավ նոր երկաթգծի տեխնիկատնտեսական հիմնավորման աշխատանքների կազմակերպում	Հյուսիս-հարավ նոր երկաթգծի տեխնիկատնտեսական հիմնավորման մշակման աշխատանքների իրականացման մրցույթի կազմակերպման, պայմանագրի ստորագրման և նախապատրաստական այլ աշխատանքների կազմակերպմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի մշակում
	32. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 1, Տրանշ 2 և Տրանշ 3 շինարարական աշխատանքների նախապատրաստում և կազմակերպում	Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի բազմափուլ ներդրումային ծրագրի Տրանշ 1, Տրանշ 2 և Տրանշ 3 շինարարական աշխատանքների նախապատրաստում և կազմակերպում
	33. Փոստի նոր կառավարման մոդելի ներդրում	փոստի նոր կառավարման մոդելի ներդրման նպատակով հավատարմագրային կառավարման հանձնման ձևի փոփոխման նպատակով կոնցեպիայի կամ սեփականության այլ ձևի փոխարինելու փաստաթղթերի պատրաստում
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	34. Բնակարանային ապահովում՝ աղետի գոտու բնակավայրերում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման միջոցով	<p>աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով կառուցվող բնակարանների (բնակելի տների) հատկացման գործընթացի իրականացում՝ մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> - ՀՀ կառավարության 1999 թ. հունիսի 10-ի N 432 և 2008 թ. նոյեմբերի 13-ի N 1337-Ն որոշումների դրույթների համաձայն պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում բնակարան (բնակելի տուն) ստանալու

		<p>համար համապատասխան համայնքների ղեկավարների կողմից հաստատված ցուցակներում ընդգրկված քաղաքացիների փաստաթղթային փաթեթների ուսումնասիրություն</p> <ul style="list-style-type: none"> - ուսումնասիրության արդյունքներով բնակարան (բնակելի տուն) ստանալու հավակնող անձանց ցուցակների հաստատում - բնակարանների (բնակելի տների) բաշխում - բնակարանների (բնակելի տների) նվիրատվության պայմանագրերի կնքում
	<p>35. Քաղաքաշինության գործունեության հատուկ կարգավորման բնագավառի օրենսդրության կատարելագործում և ՀՀ բնակավայրերում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորում</p>	<ul style="list-style-type: none"> - քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորմանն ուղղված ենթաօրենսդրական ակտերի մշակում և կատարելագործում - ՀՀ բնակավայրերում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման տարածքների առանձնացում - քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման առանձին տարածքներում կառուցապատման չափորոշիչների մշակում - տարածքների զարգացմանը նպատակաուղղված առանձին ներդրումային ծրագրերի մշակում
	<p>36. Հայաստանի Հանրապետությունում տարածական պլանավորման համակարգի բարեփոխում, քաղաքաշինության ոլորտում համայնքների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում</p>	<ul style="list-style-type: none"> - տարածական պլանավորման (քաղաքաշինական ծրագրային) փաստաթղթերի մշակման և հաստատման իրավական հիմքերի արդիականացում, կարգավորման ենթակա խնդիրների բացահայտում, նոր ընթացակարգերի մշակում - ՀՀ համայնքների ղեկավարների պատվիրատվությամբ պարտադիր մշակման ենթակա ծրագրային փաստաթղթերի ՝ գլխավոր (այդ թվում պարզեցված) հատակագծերի մշակման աշխատանքների համակարգում - ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ս որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպում - համայնքների բնակչությանը ծրագրային փաստաթղթերի նախագծերի մշակման գործընթացին իրազեկելուն և համատեղ քննարկումներին մասնակցություն
	<p>37. ՀՀ տարածքում ինքնակամ շինարարության հիմնախնդիրների լուծման միջոցառումների իրագործում</p>	<ul style="list-style-type: none"> - քաղաքաշինության ոլորտում պետական վերահսկողություն և հսկողություն իրականացնող պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների ու պարտականությունների հստակեցում

		<ul style="list-style-type: none"> - ինքնակամ շինարարություն իրականացնողների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցների խստացում - ինքնակամ շինարարության հետևանքների վերացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմիններում համապատասխան ստորաբաժանումների ստեղծմանն ուղղված միջոցառումների իրականացում - ինքնակամ շինարարության օրինականացման գործընթացը կարգավորող իրավական ակտերի գործողության ժամկետի սահմանափակում
	<p>38. Քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխանիզմների կանոնակարգում</p>	<ul style="list-style-type: none"> - ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության համայնքներում (բնակավայրերում) անհատական բնակելի տների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատարողի ներդրման ու կիրառման կարգը հաստատելու մասին» N 440-Ն որոշմամբ հաստատված կարգի ներդրում՝ այդ թվում՝ քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների կիրառման և ընթացակարգերի օպտիմալացման միջոցով - ՀՀ համայնքներում քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխանիզմների ներդրման հնարավորությունների գնահատում, խնդիրների բացահայտում և դասակարգում - քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխանիզմների ներդրմանն ուղղված դրույթների ներառմամբ գործող իրավական նորմատիվ ակտերի կատարելագործում
	<p>39. Համաշխարհային բանկի խմբի «Գործարարությամբ զբաղվելը (Doing Business) վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի էական բարելավում</p>	<ul style="list-style-type: none"> - ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրից բխող գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների իրականացմամբ «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային դասակարգման սանդղակում «Շինարարական թույլտվություններ» բաղադրիչով Հայաստանի դիրքի բարելավման ապահովում
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>	<p>40. Նախադպրոցական կրթության մատչելիության բարձրացում</p>	<ul style="list-style-type: none"> - ՀՀ 4 մարզերի (Արմավիր, Գեղարքունիք, Վայոց ձոր, Սյունիք) նախադպրոցական հաստատություններ չունեցող 70 համայնքներում դպրոցահեն նախադպրոցական խմբերի կազմակերպում՝ - շուրջ 2000 երեխաների ընդգրկում այդ խմբերում
	<p>41. Հանրակրթության ոլորտի բարեփոխումներ</p>	<ul style="list-style-type: none"> - 13 նոր ավագ դպրոցների կազմավորում, առանձին գործող ավագ

		<p>դպրոցների ցանցի ամբողջացում</p> <ul style="list-style-type: none"> - Հայաստանի համադպրոցական ինտերնետային ցանցում 414 նոր հանրակրթական ուսումնական հաստատությունների ընդգրկում` 2011 թվականի ավարտին ՀՀ-ում փոխկապակցված դպրոցների թիվը հասցնելով 1358-ի (դպրոցների ընդհանուր թվի 93,2 %) - 50 հանրակրթական ուսումնական հաստատությունների համակարգչային ուսումնական կենտրոնների վերազինում և նորարարական տեխնոլոգիաների ներդրման նպատակով տարբեր հանրակրթական ուսումնական հաստատություններում 5 նեթթուքային դասարանների հիմնում, 1000 հանրակրթական ուսումնական հաստատություններում վարչական և գործավարական գործառնությունների իրականացման համար համակարգչային սարքավորումների մեկական փաթեթի տրամադրում - հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների 20%-ի ատեստավորում, տարակարգ ստացած ուսուցիչների աշխատավարձի հավելավճարների տրամադրում - հանրակրթական ուսումնական հաստատությունների շուրջ 500 տնօրենների հավաստագրում - Վայոց ձորի մարզի ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված դպրոցահասակ մոտ 2600 երեխաների դպրոցական հագուստի և կոշիկի տրամադրում
	<p>42. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացում</p>	<ul style="list-style-type: none"> - նախնական և միջին մասնագիտական կրթության 19 միասնական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի մշակում և ներդրում - 12 նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում - 12 նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում լաբորատորիաների, համակարգչային լսարանների նորացում և վերազինում
	<p>43. Բարձրագույն կրթության բարեփոխումները` ըստ Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղությունների</p>	<ul style="list-style-type: none"> - ՀՀ կրթության որակավորման աստիճանների ընդհանրական բնութագրերի և որակավորումների ազգային շրջանակի հաստատում - բուհերի որակի ապահովման մեխանիզմների և չափանիշների հստակեցման նպատակով առնվազն 2 մասնագիտական ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ փորձաքննության իրականացում և այդ ուսումնական հաստատություններում առնվազն 2 մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրման փորձարկում

		<ul style="list-style-type: none"> - բուհերի կամ դրանց մասնագիտությունների թվաքանակի նվազում՝ առնվազն 7-10-ով. բուհերի միավորման համար նպաստավոր պայմանների ապահովում և բուհերում մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզավորման պայմանների ու պահանջների ապահովման նպատակով թվով 30 հաստատություններում ուսումնասիրությունների իրականացում: Պայմաններին չբավարարող բուհերի կամ դրանց մասնագիտությունների կասեցում - բարձրագույն կրթության համակարգի գրավչության բարձրացմանը միտված տեղեկատվական նյութերի ստեղծում և տարածում արտերկրում՝ բուհերի վերաբերյալ շրջիկ ցուցահանդեսների կազմակերպման, օտար լեզուներով ինտերնետային կայքերի ստեղծման և «Բարձրագույն կրթությունը Հայաստանում» օտարալեզու գրքի հրատարակման միջոցով - ուսանողական վարկերի համակարգի սկզբունքների մշակում և փորձնական կիրառում, շուրջ 50 ուսանողների ուսումնական վարկերի տրամադրում
<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>44. Համայնքային աջակցության ծրագրերի միջոցով գյուղատնտեսության արտադրողականության բարձրացում և գյուղական բնակչության եկամուտների ավելացում</p>	<ul style="list-style-type: none"> - հանրապետության 5 համայնքի համար 2011 թվականին արոտների կառավարման ծրագրերի մշակում, որոնք հիմք կծառայեն բնական կերահանդակների օգտագործման բնագավառում համակարգված գործունեության համար - արոտ օգտագործողների ասոցիացիաների (ֆերմերային տնտեսությունների միավորումներ) ստեղծում, որոնց գործունեությունը կնպատակաուղղվի գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանը - առաջնահերթ ներդրումային ծրագրերի մեկնարկում՝ ջրաբքիացման, արոտների ճանապարհների վերականգնման, արոտների բարելավման, դաշտային կերարտադրության զարգացման և այլ ուղղություններով - հանրապետության յոթ մարզում Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԻՖԱԴ) և ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի վարկային միջոցներով գյուղական ենթակառուցվածքների (գազաֆիկացում, ճանապարհաշինություն, ջրամատակարարում) վերականգնման ծրագրերի իրականացում - հանրապետության նախալեռնային գոտում այգեգործության զարգացման խթանում
	<p>45. Հանրապետության առնվազն 40 համայնքում գյուղատնտեսական կոոպերացիայի</p>	<ul style="list-style-type: none"> - գյուղական համայնքներում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման նախադրյալների և ներուժի գնահատում - կոոպերացիայի իրական հնարավորություններ ունեցող համայնքների

	<p>զարգացում</p>	<p>ընտրություն</p> <ul style="list-style-type: none"> - կոռպերացիայի խթանմանը նպաստող գործիքների ընտրություն և դրանց գործողության մեխանիզմների հստակեցում (տրակտորներ, սերմացու, մրցակցային դրամաշնորհներ, ինվեստիցիոն ծրագրեր և այլն) - կոռպերացիայի սկզբունքով ձևավորված ֆերմերային խմբերին արտոնյալ պայմաններով արտադրության միջոցների, դրամաշնորհների և վարկերի տրամադրման ծրագրերի քարոզչություն - կոռպերացման ծրագրերին մասնակցության հայտերի ընդունում, ռեյտինգային գնահատում և աջակցության տրամադրում - կոռպերացիայի սկզբունքով գործող խմբերի գործունեության մոնիթորինգի կազմակերպում, արդյունքների գնահատում և ծրագրի շարունակականության ձևավորում
	<p>46. Ագրարային ոլորտի տեղեկատվական և խորհրդատվական համակարգի բարեփոխումների միջոցով ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացում</p>	<ul style="list-style-type: none"> - կառուցվածքային փոփոխությունների միջոցով տարածքային խորհրդատուների գործառնությունների փոխանցում ծառայությունների գնման մրցությային ընթացակարգով ընտրված խորհրդատուներին - խորհրդատվական համակարգում մրցակցային միջոցների ձևավորում, ԳԱՀԿ/ԳԱՄԿ կառույցների հետ համատեղ խորհրդատվական այլ սուբյեկտների ներգրավում - ԳԱՀԿ և ԳԱՄԿ-երի գործառնությունների հստակեցում և կարողությունների հզորացում - գիտական, կրթական, խորհրդատվական և արտադրական սուբյեկտների մասնակցությամբ վիրտուալ տեղեկատվական ցանցի ձևավորում, մասնագիտական գիտելիքների, ինովացիոն տեխնոլոգիաների հասանելիության բարձրացում և արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելու հնարավորությունների ընդլայնում
<p>ՀՀ մշակույթի նախարարություն</p>	<p>47. Մշակութային ժառանգության պահպանություն հիմքերի ապահովում</p>	<p>- «Մշակութային ժառանգության վերականգնման ուսումնական տարածաշրջանային կենտրոնի ստեղծում</p>
	<p>48. Մշակութային ժառանգության հանրահռչակման ապահովում</p>	<p>- ՀՀ մշակույթի նախարարության թանգարանների թանգարանային առարկաների էլեկտրոնային ցուցադրության կազմակերպում</p>
	<p>49. Մշակութային ծառայություններում ապաստարկման գործառնությունների բարելավում</p>	<p>- թատերահամերգային և թանգարանային կազմակերպությունների մուտքի տոմսերի էլեկտրոնային վաճառքի միասնական համակարգի ներդրում</p>
<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական</p>	<p>50. Կենսաթոշակային բարեփոխումների</p>	<p>- կամավոր կենսաթոշակային ապահովագրության իրականացում</p>

հարցերի նախարարություն	իրականացում	
		<p>ապահովող կառուցակարգերի ամբողջացում (համապատասխան ենթաստրատեգիական և գերատեսչական իրավական ակտերի մշակում և ընդունում, կամավոր կենսաթոշակային ապահովագրություն իրականացնող կազմակերպությունների (կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների) լիցենզավորում և այլն), կամավոր կենսաթոշակային ապահովագրության համակարգի գործարկում</p> <ul style="list-style-type: none"> - բաշխողական բաղադրիչի գործունեությունն ապահովող ենթաստրատեգիական իրավական ակտերի մշակում և ընդունում - կենսաթոշակային հաշիվների վարումն ապահովող տեղեկատվական համակարգի ներդրման պայմանագրի կնքում Nasdaq-OMX-ի հետ - եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ներդրման մրցույթի անցկացում, հաղթող կազմակերպության հետ պայմանագրի կնքում - հանրային իրազեկման աշխատանքների իրականացում
	<p>51. Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրում</p>	<ul style="list-style-type: none"> - ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցի ներկայացում ՀՀ կառավարություն - սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների շենքային պայմանների գույքագրում և առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն - ինտեգրված սոցիալական ծառայությունների կառուցվածքագործառության մոդելի մշակում և առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն - փորձնական ծրագրի իրականացում առնվազն 2 մարզում, այդ թվում՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման (սոցիալական գործի վարման) փորձնական ծրագրի իրականացում - ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրումն ապահովող համապատասխան իրավական հենքի ձևավորում
	<p>52. Սոցիալական պաշտպանության ոլորտում տեղեկատվական բազաների արդիականացում</p>	<ul style="list-style-type: none"> - արդիականացված տեղեկատվական համակարգերի ներդրում - ֆինանսական կառավարման համակարգի մշակում - հաշմանդամներին և սոցիալապես անապահով անձանց պրոթեզատրոպեդիկ և վերականգնողական պարագաների, ինչպես նաև սայլակների և լսողական սարքերի տրամադրման տեղեկատվական համակարգի ներդրում - տեղեկատվության ավտոմատ փոխանակության համակարգի ներդրում - սոցիալական պաշտպանության ոլորտի կազմակերպությունների

		<p>ինտերնետ/ինտրանետ կայքի ապահովում</p> <ul style="list-style-type: none"> - էլեկտրոնային առաջնահերթ ծառայությունների մշակում - ծառայությունների մատուցման միասնական համալիր կենտրոնների ստեղծման համար անհրաժեշտ տեխնիկական, ծրագրային և ցանցային ապահովում
	<p>53. Մանկատների բեռնաթափում</p>	<ul style="list-style-type: none"> - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի մանկատներում խնամվող երեխաների կարգավիճակի և նրանց ընտանիքների (առկայության դեպքում) ուսումնասիրություն - մանկատների բեռնաթափման գործընթացի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում <p>- ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը, դրանցում երեխաների տեղավորման չափանիշները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 2179-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին N 381-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն</p> <ul style="list-style-type: none"> - «Մանկատան վերակազմակերպման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն - մանկատան վերակազմակերպման գործընթացի իրականացում - մանկատանը այլընտրանք հանդիսացող ծառայության կանոնադրության մշակում
<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>54. Սոցիալ-տնտեսական երկարաժամկետ զարգացման քաղաքականության ճշգրտում</p>	<p>- ՀՀ կառավարության 2008 թ. հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ հաստատված Գայուն զարգացման ծրագրի նպատակային ցուցանիշների և կանխատեսումների վերանայում</p>
	<p>55. Համաշխարհային բանկի խմբի «Գործարարությամբ զբաղվելը (Doing Business) վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի էական բարելավում</p>	<p>- ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրից բխող գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների իրականացմամբ «Գործարարությամբ զբաղվելը վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի բարելավման ապահովում</p>
	<p>56. Արտահանման վրա հիմնված արդյունա-</p>	<p>- արտաքին շուկաներ հայկական ապրանքների և ծառայությունների</p>

	<p>բերական քաղաքականության ձևավորում և մեկնարկ</p>	<p>մուտքի իրավապայմանագրային դաշտի ապահովում</p> <ul style="list-style-type: none"> - առնվազն 2-3 միջազգային հեղինակավոր ընկերությունների՝ ՀՀ մուտքի ապահովում - ներդրումային ծրագրերի շրջանակներում սարքավորումների և տեխնոլոգիաների ներմուծմանն աջակցող մեխանիզմների կիրառում ԶՀԳ-ի, ՀՀ ԱԱՊ-ի, ԳԳՄ-ի և այլ կառույցների կողմից աջակցող միջոցառումների, այդ թվում՝ ցուցահանդեսների և գործարար համաժողովների կազմակերպման համակարգված ուղղորդում
	<p>57. Որակի ազգային ենթակառուցվածքի բարեփոխումների մեկնարկ</p>	<ul style="list-style-type: none"> - ՀՀ որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարությամբ նախատեսված մի շարք միջոցառումների իրականացման սկիզբ
<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>58. ՀՀ օրենսդրության վերլուծություն և կատարելագործում, ՀՀ-ում գործող օրենսդրության մեջ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիային, ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող իրավական ակտերի վերացում</p>	<p>1990 թվականից մինչև 1995 թվականը ՀՀ-ում ընդունված իրավական ակտերի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիային, ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության ուսումնասիրություն, դրանց համեմատական վերլուծություն և ՀՀ գործող օրենսդրական համակարգը մաքրելու և կատարելագործելու վերաբերյալ տվյալ իրավական ակտերը ընդունող մարմիններին առաջարկությունների ներկայացում</p> <p><u>(շարունակական)</u></p>
	<p>59. Մարդու իրավունքներին առնչվող միջազգային փաստաթղթերին լիարժեք համահունչ քրեական դատավարության օրենսդրության համալիր բարելավում</p>	<p>Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի մշակում և դրանով պայմանավորված անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ առանձին հիմնարար օրենսդրական ակտերում, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում</p>
	<p>60. Արդարադատության ոլորտում մատչելիության սկզբունքի գործնական հիմքերի բարելավման նկատառումով «Datalex» ծրագրի հնարավորությունների զարգացում՝ հատկապես, համակարգչային եղանակով հայցերի հարուցելու, բողոքներ բերելու ինստիտուտ ներդնելու տեսքով</p>	<p>Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման մշակում, «Datalex» ծրագրում էլեկտրոնային ստորագրության ներդնում, փաստաբանների և քաղաքացիների ու իրավաբանական անձանց համար ուղեցույցների մշակում</p>
	<p>61. Համաշխարհային բանկի խմբի «Գործարարությամբ զբաղվելը (Doing Business)» վարկանիշային դասակարգման</p>	<p>- ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրից բխող գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների իրականացմամբ «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային</p>

	<p>սանդղակում Հայաստանի դիրքի էական բարելավում</p>	<p>դասակարգման սանդղակում «Ընկերության հիմնադրումն և «Պայմանագրերի կիրարկումն Բաղադրիչներով Հայաստանի դիրքի բարելավման ապահովում</p>
<p>ՀՀ պաշտպանության նախարարություն</p>	<p>62. Ռեզոլուցիայի կրթության ոլորտի բարեփոխում</p> <p>63. Մայայական կադրերի կառավարման համակարգի կատարելագործում</p> <p>64. Արհեստավարժ սերժանտական կազմի առանձնացում և ընդլայնում</p>	<p>- ռազմական կրթության հայեցակարգի մշակում - հայեցակարգի իրականացման միջոցառումների ծրագրի մշակում - օրենսդրական փոփոխությունների կատարում</p> <p>- սպայակազմի ատեստավորման համակարգի ներդրում - համապատասխան հարցաշարերի մշակում և տվյալների բազայի կատարելագործում</p> <p>- գործընթացի իրականացման միջոցառումների ծրագրի մշակում - ուսումնական ծրագրերի և նյութական ապահովման նորմատիվների վերանայում - օրենսդրական փոփոխությունների կատարում</p>
<p>ՀՀ արտաքին գործերի նախարարություն</p>	<p>65. Հայաստանի Հանրապետության Նախագահի սահմանած արտաքին քաղաքական ուղենիշների և Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթների իրականացմանն ուղղված աշխատանքներ</p>	<p>Հայաստանը շարունակելու է երկրի արտաքին անվտանգության հետագա ամրապնդման, զարգացման համար անհրաժեշտ արտաքին բարենպաստ պայմանների ու երաշխիքների ապահովման, համաշխարհային և տարածաշրջանային գործընթացներում առավել ընդգրկման, բարեկամ և գործընկեր երկրների հետ երկկողմ և բազմակողմ հարաբերությունների առավել զարգացման ու ամրապնդման, միջազգային կազմակերպություններում գործուն մասնակցության ապահովման արտաքին քաղաքական ուղեգիծը, առաջնահերթ քայլերը նպատակաուղղելով`</p> <p>- արցախյան հիմնախնդրի խաղաղ և արդարացի կարգավորմանը - արտաքին անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչների ամրապնդմանը - Ռուսաստանի հետ դաշնակցային և ռազմավարական հարաբերությունների առավել խորացմանը, համագործակցության ընդլայնմանն ուղղված նոր ծրագրերի իրականացմանը - Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ բարեկամական գործընկերության զարգացմանը և ամրապնդմանը - Եվրոպական ընտանիքին մերձեցմանը - անմիջական հարևանների` Վրաստանի և Իրանի հետ հարաբերությունների առավել զարգացմանը - հայ-թուրքական հարաբերությունների` առանց նախապայմանների կարգավորմանը - Մերձավոր Արևելքի ավանդական գործընկեր երկրների հետ համա-</p>

		<p>գործակցության զարգացմանը</p> <ul style="list-style-type: none"> - Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի հետ համագործակցության ընդլայնմանը - միջազգային կազմակերպություններում երկրի շահերի պաշտպանությանը - հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը - համազգային խնդիրների լուծմանը և հայկական մշակութային ժառանգության պահպանությանը - Հայաստանի քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և շահերի պաշտպանությանը
	<p>66. Եվրոպական ուղղության խորացում</p>	<p>Եվրոպայի հետ մերձեցման քաղաքականության իրականացման` ինչպես Եվրոպական կառույցների հետ հարաբերությունների հետևողական խորացման, այնպես էլ Եվրոպական երկրների հետ երկկողմ կապերի ամրապնդմանն ուղղված քայլերի ուղղությամբ</p> <ul style="list-style-type: none"> - ԵՄ-ի առաջարկությունների, ինչպես նաև ԵՄ-ի առջև ՀՀ ստանձնած պարտավորությունների իրականացման ուղղությամբ հետագա քայլեր - ՀՀ-ԵՄ 2009-2011 թթ. համագործակցության ծրագրի կենսագործմանն ուղղված քայլերի և համալիր միջոցառումների համակարգված և շարունակական իրականացում - արևելյան գործընկերությամբ նախատեսված թեմատիկ պլատֆորմների շրջանակներում բազմակողմ համագործակցության իրականացում (1. Ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում, կայունություն, 2. տնտեսական ինտեգրում և համապատասխանեցում ԵՄ-ի քաղաքականության հետ, 3. Էներգետիկ անվտանգություն, 4. մարդկանց միջև շփումներ) - ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների անցկացում - ՀՀ-ԵՄ ազատ առևտրի համաձայնագրի կնքմանն ուղղված բանակցությունների նախապատրաստական աշխատանքներ - ԵՄ-ի Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի կենսագործմանն ուղղված քայլերի և համալիր միջոցառումների կոորդինացում - ԵՄ-ի անդամ երկրներ ՀՀ քաղաքացիների մուտքի արտոնագրի տրամադրման գործընթացի դյուրացմանն ուղղված հետագա քայլերի և դիվանագիտական ջանքերի գործադրում` համապատասխան

		<p>համաձայնագիր ստորագրելու համար Եվրոպական հանձնաժողովի հետ երկխոսություն սկսելու նպատակով</p>
	<p>67. Արտաքին տնտեսական ոլորտին աջակցություն</p>	<p>Ճյուղային նախարարությունների մասնակցությամբ`</p> <ul style="list-style-type: none"> - Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովմանը, մասնավորապես, էներգակիրների և էներգիայի աղբյուրների զանազանեցմանն ուղղված միջոցառումների իրականացում - հաղորդակցության ուղիների ապաշրջափակմանը, զարգացմանն ու զանազանեցմանը, դրանց անխափան գործարկման համար պայմանների ապահովմանը նպատակաուղղված, համակարգված քաղաքականության վարույթ, համապատասխան գործողությունների և միջոցառումների իրականացում - հայրենական արտադրանքի արտահանման համար նոր շուկաների որոնմանը, արտաքին առևտրի համար նպաստավոր դաշտի ստեղծմանը նպատակաուղղված քայլերի իրականացում - փոխշահավետ տնտեսական կապերի հաստատման, բարձր տեխնոլոգիաների ձեռքբերման ու ներդրման ուղղությամբ գործադրվող ջանքերի ակտիվացում - արտաքին ներդրումների խրախուսմանը, օգնության, վարկերի և դրամաշնորհների ապահովմանը նպաստող դիվանագիտական ջանքերի ակտիվացմանն ուղղված քայլերի իրականացում
	<p>68. Մարդու իրավունքների ոլորտ. ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների և մոնիթորինգային մարմինների կողմից տրված հանձնարարականների իրականացման ապահովում, այդ թվում՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի համընդհանուր վերանայման գործընթացի շրջանակներում</p>	<p>2011 թ. գերակա խնդիրների շարքում կարևորվում են մարդու իրավունքների պաշտպանության խնդիրները և այդ ոլորտում առկա բացերի ուղղությամբ տարվող հետևողական աշխատանքը՝ ուղղված միջազգային պայմանագրերով ստանձնած ՀՀ պարտավորությունների լիարժեք կատարմանը</p> <ul style="list-style-type: none"> - համընդհանուր վերանայման գործընթացի շրջանակներում (կետ 94.5) արված հանձնարարականի՝ «Ստեղծել միջգերատեսչական մեխանիզմ, որը պատշաճ ուշադրություն կդարձնի միջազգային մեխանիզմներից ստացված առաջարկություններին, այդ թվում՝ համընդհանուր պարբերական վերանայումից բխող առաջարկություններին՝ քաղաքացիական հասարակության մասնակցությամբ իրականացում (2011 թ. մարտի 2-րդ տասնօրյակ) - ի կատարումն կանանց իրավունքների ամրապնդման ուղղու-

		<p>թյամբ ստանձնած պարտավորությունների, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեին ՀՀ կողմից միջանկյալ հաշվետվության ներկայացում (2011 թ.)</p> <p>- հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2011 թվականին շարունակվելու է ՀՀ նախագահությունը ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովում (նման բարձրաստիճան կառույցում Հայաստանի Հանրապետությունը նախագահում է առաջին անգամ)</p> <p>վերոհիշյալ համաժողովին ՀՀ պատվիրակության պատշաճ մասնակցության ապահովում (2011 թ. փետրվարի 22-ից մարտի 4-ը)</p> <p>- 2011 թվականին կշարունակվեն աշխատանքները ՄԱԿ-ի պայմանագրային և ԵԽ-ի մոնիթորինգային մարմիններին ՀՀ ազգային զեկույցների առաջին անգամ ներկայացման ուղղությամբ՝ ապահովելով ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններում դրանց պատշաճ պաշտպանությունը, այդ թվում՝</p> <p>2011 թվականի փետրվարի 14-ից մարտի 11-ին կայանալիք նստաշրջանի ընթացքում Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՀՀ 5-րդ և 6-րդ զեկույցների</p>
<p>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե</p>	<p>69. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Նորվեգիայի Թագավորության կադաստրի և քարտեզագրության գերատեսչության (Ստատենս Կարտվերկ) միջև կնքված պայամանագրի իրականացման շրջանակներում ներդնել «Անշարժ գույքի արդյունավետ գրանցում և քարտեզագրման ծառայություններ Հայաստանի համարե ծրագիրը, որի հիմնական նպատակն է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ընթացակարգերի էլեկտրոնային եղանակով իրականացման գործողությունների ծրագիրը և ապահովել տեղեկատվության, այդ թվում՝ գրաֆիկական տեղեկատվության (կադաստրային քարտեզների) հասանելիությունը կոմիտեի վեբկայքի միջոցով</p>	<p>- ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի N 1768-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջացառումների ծրագրի 8.1. -ին և 8.2.-րդ ենթակետերի պահանջների համաձայն 2011 թվականին «Անշարժ գույքի արդյունավետ գրանցում և քարտեզագրման ծառայություններ Հայաստանի համարե ներդրումային ծրագրի միջոցով կապահովվի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ընթացակարգերի պարզեցումը, ժամանակի և ծախսերի կրճատումը, առցանց ռեժիմով գույքի գրավադրման մասին տեղեկանքի ստացումը: Անշարժ գույքի գործարքների թափանցիկության բարձրացումը</p> <p>կներդրվի Եվրոպական չափանիշներով ստեղծված անշարժ գույքի և այլ քարտեզների ապահովման համակարգ, ԵՄ-ի Ինսփայր դիրեկտիվներին համապատասխան</p>
	<p>70. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ</p>	<p>- կադաստրային տվյալների միասնական էլեկտրոնային բազայի</p>

	<p>գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգում բարեփոխումների իրականացում, այդ թվում՝ Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների միասնական էլեկտրոնային ռեեստրի ստեղծում</p>	<p>ստեղծում</p> <ul style="list-style-type: none"> - քաղաքային բնակավայրերում ինքնակամ զբաղեցված հողամասերի առկայությամբ գույքի օրինական մասի նկատմամբ իրավունքների պետական գրանցման սահմանափակման վերացում - ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կորպորատիվ ցանցի տրամաբանական միացում այն բոլոր ցանցերին, որոնք օգտվում են և որոնց տվյալները անհրաժեշտ են անշարժ գույքի ռեեստրի վարման համար - իրավունքի պետական գրանցման վկայականների ձևաթղթերի փոփոխություն - անշարժ գույքի չափագրման (տեղագնություն աշխատանքների իրականացման կանոնակարգում (տեղեկատվության տրամադրման համար տեղագնության իրականացման պահանջի վերացում, գույքի չափագրման պահանջ միայն առաջնային գրանցման կամ դիմումի հիման վրա՝ փոփոխությունների առկայության դեպքում) - անշարժ գույքի չափագրման աշխատանքների մասնակի մասնավորեցում - Երևան քաղաքում սպասարկման գրասենյակների ստեղծում - Երևան քաղաքում տարածքային ստորաբաժանումների քանակի օպտիմալացում - անշարժ գույքի կադաստրի տվյալների վերաբերյալ տեղեկատվություն (այդ թվում՝ նաև միասնական տեղեկատվություն) ստանալու համար դիմումների առցանց՝ կոմիտեի պաշտոնական վեբ-կայքի միջոցով ներկայացման, այդ թվում նաև էլեկտրոնային վճարման համակարգի ներդրում - որոշ կատեգորիաների դիմողների համար իրավունքի պետական գրանցման դիմումների և իրավահաստատող փաստաթղթերի առցանց ներկայացման համակարգի ներդրում - կադաստրային գործերի էլեկտրոնային արխիվի նյութերի՝ ինտերնետ համացանցի միջոցով առցանց դիտարկման և փաստաթղթերի էլեկտրոնային պատճենների ներբեռնման համակարգի ներդրում <p>71. 2011 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի</p>
		<ul style="list-style-type: none"> - ՀՀ Վայոց ձորի մարզի 44 համայնքի տեխնիկական նախագծի կազմում և համաձայնեցում անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ

	<p>միջոցների հաշվին իրականացնել ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների սահմանների ամրացման աշխատանքները</p>	<ul style="list-style-type: none"> - կադաստրային, տեղագրական և համայնքների վարչական սահմանների նկարագրման քարտեզների համադրում և դրա արդյունքում առաջացած անճշտությունների ուղղում - համայնքների վարչական սահմանների փոխադրումը բնության մեջ (դաշտային դիտարկումներ, շրջադարձային և հանգուցային կետերի նշահարում, արտաքին ձևավորում, ուրվագծերի կազմում, սահմանանիշերի հանձնում տեղական ինքնակառավարման մարմիններին) - սահմանանիշերի դաշտային դիտարկումների արդյունքների հավասարակշռում, կոորդինատների հաշվարկում, կատալոգի կազմում - տեխնիկական հաշվետվության կազմում
<p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն</p>	<p>72. Պետական անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքների և պետական ոչ առևտրային ու այլ կազմակերպություններին պետական անշարժ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքների գրանցման ապահովում</p>	<ul style="list-style-type: none"> - պետական անշարժ գույքի հողհատկացման հիմքերի ձեռքբերում, դրանց նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման ապահովում - հանրակրթական դպրոցներ պետական ոչ առևտրային և այլ կազմակերպություններին անհատույց օգտագործման տրամադրված պետական անշարժ գույքի օգտագործման պայմանագրերի կնքում և պայմանագրից բխող իրավունքների գրանցման ապահովում
	<p>73. Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական շենք, շինությունների տակ գտնվող, ինչպես նաև դրանց սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ հողամասերի նկատմամբ գույքային իրավունքների հստակեցում</p>	<p>համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող շենքերի, շինությունների տակ գտնվող, ինչպես նաև դրանց սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ հողամասերի պատկանելիության ճշգրտում և համապատասխան առաջարկների ներկայացում</p>
	<p>74. Պետական գույքի հաշվառման բազայի ընդլայնում</p>	<p>պետական գույքի հաշվառման բազայում միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների, կամուրջների, ջրատարների և ջրամբարների, ինչպես նաև ոչ նյութական ակտիվների հաշվառում</p>
	<p>75. Վարչության ենթակայության պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում կառավարման արդյունավետության բարձրացում</p>	<p>վարչության ենթակայության պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում կորպորատիվ կառավարման կանոնագրքի ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացում</p>
<p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն</p>	<p>76. Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի</p>	<ul style="list-style-type: none"> - համակարգի շահագործումն իրականացնող ծառայողների ուսուցում - համակարգի շահագործում

	<p>գործարկում</p>	
	<p>77. Թաղային (համայնքային) ոստիկանության մոդելի ներդրում</p>	<p>- ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային բաժինների կառուցվածքում ոստիկանության հենակետերի ստեղծում</p>
	<p>78. Երևան քաղաքի հասարակական կարգի պահպանության ծառայության կատարելագործում</p>	<p>- Երևան քաղաքի հասարակական վայրերում տեսադիտման սարքավորումների ձեռքբերում և համակարգի ներդրում - ոստիկանության Երևան քաղաքի վարչության կազմում ոստիկանության ուժերի և միջոցների օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծում - պարեկապահակետային ծառայության վերակարգերի աշխատանքում նոր մեթոդների ներդրում (առանց տրանսպորտային միջոցի իրականացվող ծառայության կրճատում) - պարեկապահակետային ծառայությանն անհրաժեշտ հանդերձավորումով, հատուկ միջոցներով և զենքով ապահովում</p>
	<p>79. Երևան քաղաքում և հանրապետության մյուս խոշոր քաղաքներում, ինչպես նաև մայրուղիներում արագության վերահսկման ավտոմատ համակարգի ներդրում</p>	<p>- տեխնիկական միջոցների ձեռքբերում և ներդրում</p>
	<p>80. Վարորդական վկայական ստանալու գործնական և տեսական քննության պայմանների բարելավում</p>	<p>- Երևան քաղաքում քննական ավտոդրոմի կառուցում - Երևան քաղաքում մեկ ստորաբաժանման միջոցով վարորդական վկայականների տրման աշխատանքների կազմակերպում</p>
<p>ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե</p>	<p>81. ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի ռազմավարական ծրագրի իրականացում</p>	<p>- կոմիտեի մասնագիտական կազմի համալրում բարձր որակավորում ունեցող կադրերով, նոր կադրերի պատրաստում, վերապատրաստում - ստոմային էներգիայի օգտագործման բնագավառի օրենսդրության համապատասխանեցում ԱԷՄԳ-ի և ԵՄ-ի պահանջներին - անվտանգության վերլուծության ու գնահատման կարողությունների ուժեղացում և տեսչական ստուգումների անցկացման արդյունավետության բարձրացում - «Միջուկային և ռադիոակտիվ անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի գործունեության կատարելագործում</p>
<p>ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն</p>	<p>82. Ուղևորափոխադրումների սպասարկման որակի բարձրացման, ընթացակարգերի պարզեցման և նորագույն տեխնոլոգիաների կիրառման նպատակով «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի նոր ուղևորային համալիրի շահագործումը</p>	<p>- «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի կոնցեսիոնների կողմից ներդրումների իրականացումը (ընդհանուր 160 մլն ԱՄՆ դոլարի կապիտալ ներդրումից 2009 թվականին` 31 մլն, 2010 թվականին` 71 մլն և 2011 թվականին` 58 մլն), - մատուցվող օդանավակայանային ծառայությունների որակի բարձրացման ապահովման նպատակով նոր տեխնոլոգիաների</p>

		<p>կիրառումը</p> <p>- օդանավակայանային ընթացակարգերի պարզեցում (համապատասխանեցումը քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) և Եվրամիության պահանջներին)</p>
	<p>83. Քաղաքացիական ավիացիայի ոլորտում Հայաստանի Հանրապետության երկ-կողմանի հարաբերությունների ընդլայնում</p>	<p>- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Քուվեյթի պետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրի ստորագրմանն ուղղված` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր անհրաժեշտ գործողությունների իրականացում</p> <p>- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Մերբիայի Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրի ստորագրմանն ուղղված` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր անհրաժեշտ գործողությունների իրականացում</p>
	<p>84. Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի ներդրմանն առնչվող միջոցառումների իրականացում</p>	<p>- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիային առնչվող ձեռնարկատիրությամբ զբաղվող անձանց հետ բանակցությունների վարում` նրանց փոքր ավիացիայի ոլորտը ընդգրկելու նպատակով</p> <p>- փոքր ավիացիայի հետ կապված խնդիրներին և զարգացումներին հասարակության լայն շերտերին տեղեկացում գլխավոր վարչության պաշտոնական կայքի և ԶԼՄ-ների միջոցով</p>
<p>ՀՀ կառավարությանն առնթեր ՀՀ պետական եկամուտների կոմիտե</p>	<p>85. Հարկային հսկողության մեխանիզմների արդիականացում</p>	<p>- ՀՀ-ում պիտակավորման ենթակա ապրանքների պիտակավորման համակարգի ներդրում</p> <p>- ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրում</p> <p>- ռիսկերի կառավարման հիման վրա ԱԱՀ-ի գերավճարների հայտերի ուսումնասիրության համակարգի ներդրում</p> <p>- երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների հարկային մարմնի տեղեկատվական բազայում ինտեգրում և կիրառման ընթացակարգերի մշակում</p> <p>- էներգետիկայի, կապի և հանքարդյունաբերության ոլորտներում ստուգումների իրականացմանն ուղեկցվելի մշակում և ներդրում</p>
	<p>86. Հարկ վճարողների սպասարկման ծառայությունների որակի բարձրացում</p>	<p>- հարկային և մաքսային մարմինների կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ավելացում` էլեկտրոնային եղանակով ներկայացվող հաշվետվությունների քանակի էական ավելացում և հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգի ներդրում</p>

		<ul style="list-style-type: none"> - հարկ վճարողների առնվազն մեկ նոր սպասարկման կենտրոնի գործարկում և սպասարկման միասնական ստանդարտների ներդրում, հարկ վճարողներին օժանդակող տեղեկատվության հրապարակում - հարկ վճարողների հեռախոսագանգերի սպասարկման կենտրոնի (Call center) գործարկում
	<p>87. ՀՀ կա ՊԵԿ-ի կառավարման արդյունավետության բարձրացում</p>	<ul style="list-style-type: none"> - «Հարկատու 3ե էլեկտրոնային համակարգի նոր ենթահամակարգերով (մոդուլներով) համալրում՝ այդ թվում՝ կամերալ ուսումնասիրությունների համակարգի ներդրում - ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ուսումնական կենտրոնի ներդրման ծրագրի գործարկում, այդ թվում՝ հարկային և մաքսային ծառայողների համապարփակ և պարտադիր ուսուցման ծրագրի ներդրում - հարկային և մաքսային մարմիններում վերլուծական կարողությունների ուժեղացում - չկատարված հարկային պարտավորությունների աճի և նոր ապառքների կուտակման ռիսկերի կանխարգելում - միջազգային լավագույն փորձի հիման վրա հարկային մարմնի հիմնական բիզնես գործընթացների վերակազմակերպման և ավտոմատացման ծրագրի նախագծում և իրականացում - հարկային և մաքսային ծառայողների առաջխաղացման և խրախուսման համակարգի ներդրում
	<p>88. Մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի կրճատում</p>	<ul style="list-style-type: none"> - մաքսային հայտարարագրի վճարման էլեկտրոնային համակարգի ներդրում - մաքսային ձևակերպումների առանձին փուլերի էլեկտրոնային հաշվառում - մաքսային մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և հսկողության համակարգի ներդրում - սահմանային անցման կետերի արդիականացում և եվրոպական չափանիշերին համապատասխանեցում
	<p>89. Համաշխարհային բանկի խմբի «Գործարարությամբ զբաղվելը (Doing Business) վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի էական բարելավում</p>	<ul style="list-style-type: none"> - ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրից բխող գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների իրականացմամբ «Գործարարությամբ զբաղվելը վարկանիշային դասակարգման սանդղակում «Հարկերի վճարում և «Արտաքին առևտուր և բաղադրիչներով Հայաստանի դիրքի բարելավման ապահովում
<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտես-</p>	<p>90. Հանրապետության մի շարք քաղաքների և գյուղական բնակավայրերի ջրամատակարար-</p>	<ul style="list-style-type: none"> - Ասիական զարգացման բանկի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման բանկի, Համաշխարհային

<p>սույթյան պետական կոմիտե</p>	<p>ման բարելավում, մատակարարվող խմելու ջրի որակի ապահովում, կայուն և հուսալի ջրամատակարարում, ջրի կորուստների կրճատում, ջրամատակարարման տնտրության աստիճանական ավելացում՝ նախորդ տարվա նկատմամբ առնվազն 1 ժամով (իսկ կառավարման պայմանագրերով նախատեսված լինելու դեպքում՝ պայմանագրերով նախատեսված չափերով), Սևանա լճի բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում, նոր ներդրումային ծրագրերի համար դռնոր կազմակերպությունների հետ բանակցությունների վարում, ինչպես նաև խմելու և ոռոգման ոլորտներում շուրջ 500 կմ ջրագծերի և ջրանցքների վերանորոգման ու կառուցման աշխատանքների իրականացում, այդ թվում՝ Աբովյան, Նոյեմբերյան, Չարենցավան, Ագարակ, Արթիկ, Վանաձոր, Մարալիկ քաղաքներում ջրամատակարարման համակարգերի վերականգնում և ջրամատակարարման բարելավում</p>	<p>բանկի կողմից ֆինանսավորվող՝ «Ջրամատակարարման և ջրահեռացման (սեկտորի) ծրագրի, «Լոռու (Վանաձոր) և Շիրակի (Գյումրի) մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավումե ծրագրի, «Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացմանն ծրագրի (լրացուցիչ ֆինանսավորում) իրականացման ապահովում</p> <ul style="list-style-type: none"> - Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից ֆինանսավորվող «Սևանա լճի բնապահպանական ծրագրի շրջանակներում Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների կոյուղաջրերի մաքրման կայանների կառուցում, ինչպես նաև Գավառ, Մարտունի, Վարդենիս, Սևան և Ջերմուկ քաղաքների կոյուղու ցանցերի վերանորոգում - «ՀՀ կառավարության և Աբու Դաբիի Ջարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Արփա-Սևանե թունելների վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված թունելի որոշ հատվածների վերականգնում, վերանորոգում և շինարարություն - Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից ֆինանսավորվող Սևանա լճի բնապահպանական երկրորդ ծրագրի ներգրավմանն ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացում
	<p>91. Ջրային տնտեսության ոլորտի ընկերությունների և ջրային համակարգերի կառավարման բարեփոխումների շարունակություն</p>	<ul style="list-style-type: none"> - «Հայջրմուղկոյուղիե ՓԲԸ-ում մասնավոր կառավարման գործընթացի շարունակության ապահովում - «Լոռի-ջրմուղկոյուղիե, «Շիրակ-ջրմուղկոյուղիե, «Նոր Ակունքե փակ բաժնետիրական ընկերություններում մասնավոր կառավարիչների հետ կնքված պայմանագրերով 2011 թվականի համար նախատեսված ցուցանիշների կատարման ապահովում - ոռոգման համակարգերի մասնակցային կառավարման ամրապնդում, ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացում - ոռոգման համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների

		<p>իրականացում</p> <p>- ջրամատակարար ընկերությունների սպասարկման դաշտից դուրս գտնվող գյուղական բնակավայրերում ջրամատակարարման կառավարման բարելավմանն ուղղված ուսումնասիրությունների իրականացում</p>
	92. Մարմարիկի ջրամբարի շահագործման հանձնում	Մարմարիկի ջրամբարի շահագործման հանձնման ապահովում
Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով	93. Մրցակցային միջավայրի բարելավում	Կենտրոնացվածության բարձր աստիճան ունեցող ապրանքային շուկաների ինստիտուցիոնալ ուսումնասիրություն և այդ շուկաներում օրենսդրության պահանջների հնարավոր խախտումների բացահայտում